ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ Մ.ՊԱՊՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18/40 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 139.2 ՔԱՌ. Մ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՋՈՍԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով ««Дом русской книги» հասարակական մշակութային կենտրոն» նշանի իրավատեր «ՋՈՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 23.10.2021թ. գրությունը և Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալի առաջարկությունը, ***Կապան համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Մ.Պապյան փողոցի թիվ 18/40 հասցեում գտնվող գրադարանի (Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27022014-09-0026) 139.2 քառ.մետր մակերեսով հասարակական նշանակության տարածքը 5 /հինգ/ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով օգտագործման տրամադրել ՋՈՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մշակութային, լեզվի և գրականության զարգացման ու ամրապնդման նպատակով, միաժամանակ պահպանելով համայնքային գրադարանի գործունեությունը:

2. Պարտավորեցնել «ՋՈՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իր միջոցներով իրականացնել գրադարանի կապիտալ վերանորոգումը և համապատասխան գույքով, տեխնիկայով ու գրականությամբ վերազինումը և նշված ներդրումները սեփականության իրավունքով հանձնել Կապան համայնքին:

3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (18)՝

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ _____

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____

ՍՊԱՐՏԱԿ ՋԱՔԱՐՅԱՆ _____

ՋՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ՎԱՀԱՆ ՂԱՋԱՐՅԱՆ _____

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ _____

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____

ՀԱՄՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ _____ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

2022թ. փետրվարի 15
ք. Կապան